

ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ ՍՈՒՐԵՆ ՊԱՊԻԿՅԱՆԻ ՄՈՏ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 - ԿՄ 90 + 191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան

**Խորհրդի
անդամներ՝**

- | | |
|----------------|--|
| Ս. Պապիկյան | ՀՀ փոխվարչապետ, խորհրդի նախագահ |
| Վ. Քերոբյան | ՀՀ էկոնոմիկայի նախարար |
| Գ. Սանոսյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար |
| Ռ. Պետրոսյան | ՀՀ շրջակա միջավայրի նախարար |
| Կ. Անդրեասյան | ՀՀ արդարադատության նախարար |
| Ք. Ղալեչյան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող) |
| Ս. Թովմասյան | Կադաստրի կոմիտեի ղեկավար |
| Հ. Սարգսյան | Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ (համաձայնությանը, Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում, ճանապարհաշինության բնագավառը համակարգող) |
| Ն. Մարտիրոսյան | «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ-ծրագրի ղեկավար (համաձայնությանը) |
| Ս. Մաչյան | «Ճանապարհային դեպարտամենտ» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրեն |

Կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստն իրականացվել է ս.թ. սեպտեմբերի 1-ին գրավոր ընթացակարգով: ՀՀ փոխվարչապետ, կառավարման

խորհրդի նախագահ Ս.Պապիկյանի՝ ս.թ. սեպտեմբերի 1-ի թիվ 04/03.14/29892-2021 գրությամբ Խորհրդի անդամներին ուղարկվել են օրակարգը և կից նյութերը՝ Խորհրդի անդամներին առաջարկելով իրականացնել գրավոր քվեարկություն:

Խորհրդի անդամների կողմից օրակարգի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեն ստացվել, ուստի օրակարգը համարվել է հաստատված:

Համաձայն Խորհրդի աշխատակարգի 13-րդ կետի և սույն նիստի գրավոր քվեարկության արդյունքների՝ Խորհուրդն օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումը.

1. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 2-ի շրջանակներում «Էջիս Ինթերնեյշնլ» և «Կոքս Քոնսալթ» ՀԶ-ի խորհրդատվական կազմակերպության հետ կնքված շինարարության վերահսկման պայմանագրի շրջանակներում Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների վերահսկման Պայմանագրի ժամկետի երկարաձգման և գումարի ավելացման հարցի քննարկում և հաստատում:

Քննարկումների արդյունքում Խորհուրդը որոշեց՝

Հաստատել Երևանի քաղաքապետարանի և «Էջիս Ինթերնեյշնլ» ու «Կոքս Քոնսալթ» համատեղ ձեռնարկության միջև կնքված պայմանագրի թիվ 12 փոփոխությունը՝ ընդհանուր 333,068.80 ԱՄՆ դոլար և 124,880.00 Եվրո գումարի ավելացմամբ և մինչև 2021 թ. դեկտեմբերի 31-ը Պայմանագրի ժամկետի երկարաձգմամբ:

2. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 1-ի շրջանակներում Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի նախագծման, շինարարության կառավարման և վերահսկման խորհրդատու Էջիս Ինթերնեյշնլ ընկերության հետ կնքված պայմանագրի շրջանակներում Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի շինարարության վերահսկման Պայմանագրի ժամկետի երկարաձգման և գումարի ավելացման հարցի քննարկում և հաստատում:

Քննարկումների արդյունքում Խորհուրդը որոշեց՝

Հաստատել Երևանի քաղաքապետարանի և «Էջիս Ինթերնեյշնլ» միջև կնքված պայմանագրի թիվ 25 փոփոխությունը՝ ընդհանուր 82,442.00 ԱՄՆ դոլար և 79,376.00 Եվրո գումարի ավելացմամբ և մինչև 2021 թ. դեկտեմբերի 31-ը Պայմանագրի ժամկետի երկարաձգմամբ: